

յաջողակ ելքը: Ով գիտէ քանի՛-քանի՛ անգամներ անիկա
այսպէս հաւատարիմ է մնացած իր սովորութեան, հեռ-
ւէն թելադրուած նշաններ, կարգախօս հասկնալու: Նոյն
ատեն անիկա բռնած է ձեռքէն իր կրկինը հասակ պարզող
իր ընկերոջ, որ անժպիտ, անիմաստ, դանդաղամիտ, գլու-
խը կախելու վարժութեամբ մը դէմքը բրած քիչ մը ծուռիկ,
մուռիկ, կը թթուեցնէ իր արտայայտութիւնը, սա տեղա-
փոխումին անտեղութիւնն իսկ չհասկնալով ընկերոջ
հաշուոյն: Անիկա կը հետեւի ընկեր Մաթիկ Մելիք-
խանեանին, ինչպէս փողոցին վրայ, քիչիկ մը ցած շէշտով
յայտարարէր պիտի գեղապետին տղուն ու ինծի:

- Ընկեր Մաթիկ Մելիքխանեանց...